

Համաշխարհային Բանկի Նոր զեկույցն առաջարկում է պետական ծախսերի արդյունավետության բարելավման ճանապարհներ

Նոյեմբերի 9, 2023թ. - [«Հայաստանի պետական ծախսերի ուսումնասիրություն: Ծախսերի արդյունավետության բարելավում»](#) խորագրով վերլուծական Նոր զեկույցը, որն այսօր ներկայացվեց Հայաստանում Համաշխարհային բանկի գրասենյակի կողմից, անդրադառնում է Հայաստանի ֆիսկալ ցուցանիշների բարելավմանը վերջին երկու տասնամյակների ընթացքում, և հանդես է գալիս առաջարկություններով, ուղղված հանրային ծախսերի բարելավմանը: Չեկույցում անդրադարձ է կատարվում ենթակառուցվածքներին, ճանապարհային տրանսպորտի, առողջապահության և կրթության ոլորտներին:

Պետական ծախսերի ուսումնասիրության զեկույցը ցույց է տալիս, որ հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների աջակցության պայմաններում հարկերի հավաքագրումն ավելացել է Հայաստանում, և կառավարությունը ներկայումս բավարար ռեսուրսներ ունի՝ ծախսումները պահպանելու և պարտքի մակարդակը կայուն պահելու համար: Սակայն Նշվում է, որ ծախսերի արդյունավետությունը դեռ պետք է բարելավվի և կոնկրետ առաջարկներ է ներկայացնում կապիտալ ծախսերի ավելացման, սոցիալական աջակցության և կենսաթոշակների փոփոխությունների և «Առողջության համապարփակ ապահովագրության» փուլային ներդրման համար:

Չեկույցի հիմնական բացահայտումն այն է, որ ռազմավարական պլանավորման բարելավումը և տվյալների օգտագործումը և ապացույցների վրա հիմնված պետական ներդրումների որոշումները կբարելավեն կապիտալ ծախսերի որակը: Նշվում է նաև, որ խոցելի խմբերի հասցեական թիրախավորման բարելավումը պահանջվում է ավելի արդյունավետ և էֆեկտիվ սոցիալական ծախսերի համար, որոնք ծախսերի իմաստով Հայաստանի համար մեծությամբ երկրորդն են շարունակում մնալ: Առողջապահական ծախսերի անարդյունավետության հաղթահարումը կնվազեցնի առողջապահական ընդհանուր ծախսերը և գրպանից կատարվող ծախսերը, որոնք ամենաբարձրն են աշխարհում, և լրացուցիչ բուժքննությունները կստեղծի՝ տնտեսական ցնցումների կամ ճգնաժամերի դեպքում:

«Սոցիալական պաշտպանության և առողջապահության ոլորտում հանրային ծախսերի մակարդակի և արդյունավետության բարելավումը կարող է երկարատև օգուտներ բերել: Սա, իր հերթին կարող է հանգեցնել սոցիալական ծառայությունների ավելի լայն և ավելի լավ ծածկույթի՝ այդպիսով թույլ տալով ավելի լավ թիրախավորել ամենաաղքատ և առավել խոցելի խավերին», - նշեց Համաշխարհային Բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) մարդկային զարգացման գծով տարածաշրջանային տնօրեն Միխայիլ Ռուտկովսկին:

Չեկույցի առաջարկությունները քննարկելու համար մեկնարկային միջոցառման շրջանակում նաև անցկացվեց նախարարների մակարդակով փորձագիտական քննարկում մարդկային կապիտալի զարգացման թեմայով՝ թե ինչպես Հայաստանը կարող է սոցիալական և առողջապահական ոլորտներում բարելավել իր ծախսարդյունավետությունը: Փորձագիտական քննարկումը վարում էր Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարոլին Գեգինաթը, հրավիրված խոսնակներն էին Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Աննա Ժամակոչյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ և Համաշխարհային Բանկի Եվրոպա և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանայի մարդկային զարգացման գծով տնօրեն Միխայլ Ռուտկովսկին:

«Կառավարության կառուցվածքում չկա մի մարմին, որը կգնահատի պետական գումարների ծախսման արդյունավետությունը: Կան համապատասխան մարմիններ, որոնք գնահատում են հանրային ծախսերի իրավաչափությունը, հանձնարարականների կատարումը, սակայն արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից դեռ շատ բան ունենք անելու: Մենք ունենք խորը գիտակցում, թե որքան կարևոր է այս հարցը: Ընդհանրապես չենք հայտնում Համաշխարհային բանկին և ցանկանում ենք բոլորիս արդյունավետ քննարկում», նշեց Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը բացման խոսքում:

Հրավիրված բանախոսները քննարկեցին ավելի լավ թիրախավորված սոցիալական աջակցության ծրագրի խնդիրները և հնարավոր լուծումները, ռազմավարական գնումների ապահովման ճանապարհները առողջապահության համակարգում, դեղագործական շուկայի և գների բարձրացման կարգավորումը, ինչպես նաև քննարկեցին տարածաշրջանում կառավարության բարեփոխումների իրականացման ընդհանուր օրինաչափությունները և մարտահրավերները:

Համաշխարհային Բանկը ներկայումս Հայաստանում ֆինանսավորում է 10 ծրագիր՝ 500 մլն ԱՄՆ դոլարի չափով: 1992թ-ին Հայաստանում գործունեությունը մեկնարկելուց ի վեր ՀԲ-ն 2.7 մլրդ ԱՄՆ դոլար է տրամադրել Միջազգային Չարգացման Ընկերակցությունից (ՄՉԸ), որի դոնոր Հայաստանը դարձավ 2023թ-ին, Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկից (ՎՉԲ), հոգաբարձուների հիմնադրամներից: Համաշխարհային Բանկը հանձնառու է շարունակել աջակցել Հայաստանին՝ վերջինիս զարգացման ճանապարհին՝ ուղղված դեպի աղքատության կրճատումը և համատեղ բարգավաճումը:

Կոնտակտային անձինք.

Երևանում՝

Հասմիկ Սողոմոնյան՝ hsoghmonyanyan@worldbankgroup.org

Վաշինգթոնում, Կ.Շ.՝

Սոնա Փանաջյան՝ spanajyan@worldbank.org